Հայտարարություն

Երևանի «Յ. Լեփսիուսի անվան հ. 88 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ «Մաթեմատիկա» (23 դասաժամ) առարկայի ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մշակված հարցաշարերի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է Հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

- Դիմում/ (Ձև 1/ մեկ լուսանկար 3x4 չափի)
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/
- Անձը հատատող փաստաթուղթ
- Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք՝ աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/
- Ինքնակենսագրություն /Ձև 5/
- Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի հանրապետությունում աշխատելու իրավունք
- ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մարտի 23-ը ներառյալ, ամեն օր 10:00-ից 15:00, բացի շաբաթ և կիրակի օրերից և այլ ոչ աշխատանքային օրերին:

Մրցույթը տեղի կունենա մարտի 28-ին, ժամը 11:00-ին, Երևանի հ. 88 հիմնական դպրոցում:

Հասցե՝ ք. Երևան, Նոր Նորք 7-րդ զանգված. Կարախանյան 11

Տեղեկությունների համար զանգահարել՝ /010/666488 հեռախոսահամարով: